

«ԵՓՐԵՄ» ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՏԱՆ «ԽԱՉԳԱՐ» ԱՊՐԱՆՔԱՆ

Posted on November 6, 2013 by Keghart




Category: [Opinions](#)



«Խաչքար»ը Կ'արժանանայ Հ.Հ. Նախագահին Եւ Արուեստի Ու Մշակոյթի Աստղերու Բարձր Գնահատանքին


Համօ Մոսկօֆեան, Երեւան-Պէյրուս 7 Նոյեմբեր 2013

Վառ յուշերով Պէյրուս վերադարձան «Եփրեմ» Ոսկերչական Տան ներկայացուցիչները՝ Հայաստանի մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած «Երեւան Շօ 2013» Ոսկերչութեան  միջազգային ցուցահանդէսէն:

Հայ Ոսկերչական Միութեան (AJA) եւ Հայաստանի պետութեան կողմէ կազմակերպուած այս մեծ եւ բարձր գնահատելի արուեստ-արհեստի իրադարձութիւնը բախտաբեր եղաւ նաեւ «Խաչքար» բացառիկ ստեղծագործութեան համար, որուն հասոյթին մեծ մասը կը յատկացուի հայ չքաւոր ուսանողներու օգնութեան:


«Խաչքար»ը Կ'արժանանայ Հ.Հ. Նախագահին Եւ Արուեստի Ու Մշակոյթի Աստղերու Բարձր Գնահատանքին

Համօ Մոսկօֆեան, Երեւան-Պէյրուս 7 Նոյեմբեր 2013

Վառ յուշերով Պէյրուս վերադարձան «Եփրեմ» Ոսկերչական Տան ներկայացուցիչները՝ Հայաստանի մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած «Երեւան Շօ 2013» Ոսկերչութեան  միջազգային ցուցահանդէսէն:

Հայ Ոսկերչական Միութեան (AJA) եւ Հայաստանի պետութեան կողմէ կազմակերպուած այս մեծ եւ բարձր գնահատելի արուեստ-արհեստի իրադարձութիւնը բախտաբեր եղաւ նաեւ «Խաչքար» բացառիկ ստեղծագործութեան համար, որուն հասոյթին մեծ մասը կը յատկացուի հայ չքաւոր ուսանողներու օգնութեան:

Ոսկեայ եւ ադամանդակուռ հայ ոսկերչութեան գլուխ-գործոց այս ապարանջան մեծ հիացմունքի եւ գնահատանքի արժանացաւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի ու ընտանիքին կողմէ, որոնք ոչ միայն այցելեցին «Եփրեմ»ի տաղաւարը՝ Կարէն Տէմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ, այլեւ քանի մը հատ «Խաչքար» գնելով, քաջալերեցին հայ ժողովուրդին ոսկերչութեան արուեստին եւ բարեսիրական նպատակներով զայն օգտագործելու վեհ նպատակները...:

Ինչպէս որ «Խաչքար»ը նուիրուած էր հայ ժողովուրդի երգարուեստի պարծանք,  Չուիցերիոյ մօտ Հայաստանի դեսպան Շարլ Ազնաւուրին, ժընեւի «Intercontinental» պանդոկին մէջ տեղի ունեցած հանդիպման ընթացքին՝ այնպէս ալ քուէարկութենէն ետք, «Եփրեմ» Ոսկերչական Տունը որոշեց «Խաչքար»ով պարգեւատրել հայկական եւ աշուղական երգերու նշանաւոր երգչուհի եւ գեղեցկուհի Նունէ Եսայեանը՝ Մայրենի հողի վրայ...:

Նախապատրաստական աշխատանքներէ ետք, “ամենակարող” արուեստագիտուհին,

զանգուածային լրատուական միջոցներու եւ հեռատեսիլի կայաններու նկարահանողներու ընկերակցութեամբ՝ ժամանեց մարզա-համերգային համալիր: «Խաչքար»ի տուչութիւնը տեղի ունեցաւ ձեռամբ «Եփրեմ»ի ներքին ու արտաքին կապերու ու վաճառքի պատասխանատուներ՝ Լուրֆիկ եւ Ժան Շիւրրտմեաններու: Հանրայայտ երգչուհին շնորհակալութիւն յայտնեց Լիբանանի հայութեան եւ, խոստանալով այս թանկարժէք նուէրով միշտ նեցուկ կանգնիլ Լիբանանի եւ ադիտահար Սուրիոյ՝ ու Մայր Հայրենիքի միջեւ կամուրջներու, փոխ-օգնութեան կազմակերպման:

“Մենք կը շարունակենք մեր առաքելութիւնը եւ կը ծրագրենք «Խաչքար»ով պարգեւատրել հայ թէ օտար այն անձնաւորութիւնները, որոնք կարեւոր ծառայութիւններ կը մատուցեն հայ մշակոյթին, արուեստին, երիտասարդութեան, նոյնիսկ մարզական կեանքին: Կը ծրագրենք նաեւ Լիբանանի մէջ համերգներ կազմակերպել եւ ամբողջ հասոյթը նուիրել հայ կարօտեալ ուսանողներու ֆոնտերուն,” յայտարարեց Լուրֆիկ Շիւրրտմեան



“Մինչ այդ՝ «Խաչքար»ը մեծ պահանջարկ սկսած է ունենալ ոչ միայն Միջին Արեւելքի ու Հայաստանի, այլեւ Եւրոպայի եւ Ամերիկաներուն մէջ, ուր ամէն հայ թէ հայասեր անձնաւորութիւն, կը ցանկայ ունենալ մեր ժողովուրդի անսասան ոգին ներկայացնող այս ոսկեղէն գոհարը...” Ժպտալով մեզի իր տպաւորութիւնը փոխանցեց Պրն. Լուրֆիկ Շիւրրտմեան:

Այսպիսի ուրախալի լուրերով եւ նուաճումներով, նոր լիցք ու յուսատու ապագայ կը մաղթենք ինչպէս «Եփրեմ»ին, այնպէս ալ մեր տաղանդաշատ ժողովուրդին:

